

891.715  
S - 80



ԵՎԱՆԻՍ



ՊԱՏՄԱՄՔՆԵՐ

891745  
5-80

ՊԵՏՈՒԹՅՈՒՆ

2011-05

891.7115

Կ - 80

ԼԵՎ. ՏՈՒՏՈՅՑ

10

# ՊԱՏՄՎԱԾՔՆԵՐ

Նկարներ՝ Ս. ԶԱԿՐԺԵՎ. ՍԿՈՒ  
Թարգմանեց՝ ՄԿՐՏԻՉ ԿՈՐՅՈՒԽՆ

ՊԵՏՀՐԱՍ  
ՀԼԿՅԵՄ ԿԿ ԿԻՑ ՄԱՆԿԱԿՈՒՄԱՆԵԿԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆ  
ՅԵՐԵՎԱՆ  
1938

2 Գայլի մարտի 2013 Հ. Հայքապետան  
Տեղ. Խմբագիր՝ Ան. Գասպարյան  
Սըբագրիչ թ. Հովհակիմյան



Կ773  
38

Գլավլիտի լիազոր Ղ — 3531 Հրատ. 4470.

Պատվեր 110. Տիրաժ 5000.

Բուղթ 62×94 Տպագլ. 1 մամ.

Մեկ մամ. 17280 նիշ. Հեղինակ. 1/4 մամ.

Հանձնված ե արտադրության 29 հունվարի 1938 թ.

Ստորագրված ե տպագրության համար 28 ապրիլ 1938 թ.

Գինը 40 կ.

Պետհաստի 1 տպարան, Յերևան, Լենինի 65

## ԱՂՋԻԿՆ ՈՒ ՍՈՒՆԿԵՐԸ


Յերկու աղջիկ, սունկ հավաքած՝ տուն  
ելին գնում։ Նրանք պետք ե անցնելին յեր-  
կաթզծի վրայով։

Կարծելով, թե գնացքը հեռու յե, նրանք  
բարձրացան վերև ու սկսեցին քայլել ուշ-  
սերի արանքով։

Հանկարծ լսվեց գնացքի ձայնը։ Մեծ քույ-  
րը յետ փախավ, իսկ փոքրը՝ շարունա-  
կեց վազել։

Մեծ քույրը գոչեց։

— Յետ մի՞ դառնա։



Բայց գնացքն այնքան մոտ եր և այնպես եր աղմկում, վոր փոքր քույրը մեծի ասածը. Հմեց: Նա կարծեց, թե իրեն պատվիրում են յետ փախչել:

Նա ուևսերի վրայով յետ վազեց, սայթաքեց, սունկերը թափվեցին և սկսեց հավաքել:

Գնացքն արդեն չափազանց մոտ եր: Մեքենավարը սուլում եր, վորքան վոր ուժ ուներ:

Մեծ քույրը գոռում եր. «Թող սունկերը», իսկ փոքրը կարծում եր, թե ասում ե հա-

վաքի, և սկսեց ճանապարհի վրա ոողալով, սունկերը հավաքել:

Մեքենավարը գնացքը կանգնեցնել չկարողացավ: Նա սուլում եր, վորքան ուժ ուներ և գնացքն անցավ աղջկա վրայով:

Մեծ քույրը դողում եր ու լալիս: Ուղեգորները նայում եյին վագոնների լուսամուտներից, իսկ վագոնավարը վազեց ծայրի վագոնը, վոր տեսնի, թե ինչ պատահեց աղջկան:

Յերբ գնացքն անցավ, բոլորը տեսան, վոր աղջիկն անշարժ պառկած է յերկաթգծերի արանքում գլուխն ի վար և չի շարժվում:

Հետո յերբ զնացքն արդեն հեռացավ, աղ-  
ջիկը գլուխը բարձրացրեց, թռավ ծնկնե-  
րի վրա, հավաքեց սունկերը և վազեց քրոջ  
մոտ:



## Կ Ո Ր Ի Զ Ը

Մայրիկը սալոր ե զնել և ուզում եր  
ճաշից հետո բաժանել յերեխաներին: Սալորն  
ափսեյով դրված եր սեղանի վրա: Վանյան  
յերբեք սալոր չեր կերել և շարունակ հոտո-  
տում եր: Սալորները շատ եյին դուր յեկել  
նրան: Շատ եր ուզում ուտել: Նա շարու-  
նակ պտտվում եր սալորի շուրջը: Յերբ սե-  
նյակում մարդ չկար, նա չհամբերեց: Մեկը  
վերցրեց ու կերավ: Ճաշից առաջ մայրիկը  
համբեց սալորները և տեսավ, վոր մեկը չկա:  
Այդ մասին նա հայտնեց Վանյայի հայրիկին:

Ճաշի ժամանակ հայրիկն ասաց.

— Դե, յերեխեք, ձեզանից մեկն ու մեկը

մի սալոր չմ կերել:

Բոլորը պատասխանեցին.

— Վհչ:

Վանյան խեցգետնի նման կարմրեց և  
նույնպես պատասխանեց.

— Վհչ, յես չեմ կերել:

Այն ժամանակ հայրիկն ասաց.

— Ձեզանից ով վոր ել կերել ե, վատ ե  
արել, բայց ցավն այդ չեւ Յավն այն ե, վոր  
սալորի մեջ կորիզ կա և ով վոր չի կարո-  
ղանում սալոր ուտել, կորիզը կուլ կտա, մի  
որից հետո կմեռնի: Յես դրանից եմ վախե-  
նում:

Վանյան գունատվեց և ասաց.

— Վհչ, յես կորիզը լուսամուտից դուրս  
նետեցի:

Բոլորը ծիծաղեցին, իսկ Վանյան լաց յեղավ:



ԻՆՉ ՊԱՏՄԵՑ ՅԵՐԵԽԱՆ ԱՅՆ ՄԱՍԻՆ,  
ԹԵ ԻՆՉՊԵՍ Ե ԻՆՔԸ ՓՈԹՈՐԿԻ  
ԲՈՆՎԵԼ ԱՆՏԱՌՈՒՄ

Յերբ փոքրիկ եյի, ինձ ուղարկեցին ան-  
տառ սունկի: Յես հասա անտառ, սունկ հա-  
վաքեցի և ուզում եյի տուն վերադառնալ:  
Հանկարծ յերկինքը մթնեց, անձրև յեկավ և  
վորոտ սկսվեց: Յես վախեցա և նստեցի մի  
մեծ կաղնու տակ: Կայծակը փայլատակեց  
այնքան պայծառ և լուսավոր, վոր ցավից  
աչքերս փակեցի:

Իմ գլխավերնում ինչ վոր մի բան ձըռ-  
ձըռում ու վորոտում եր: Հետո ինչ վոր մի

բան դիպավ գլխիս: Յես վայր ընկա և այնքան սպասեցի, մինչև վոր անձրևը դադարեց: Յերբ ուշքի յեկա, անտառի բոլոր ծառերից անձրևաջուր եր կաթկթում, թռչունները յերգում եյին և արեք խաղում եր:

Մեծ կաղնին կոտրվել եր և նրանից ծուխ եր բարձրանում: Իմ շուրջը փոփած եյին կաղնու ճյուղները: Շորերս սաստիկ թրջվել եյին և կպել մարմնիս: Գլխիս ուռուցք եր գոյացել և մի քիչ ցավում եր: Յես գտա գլխարկը, հավաքեցի սունկերը և տուն փախա:

Տանը վոչ վոք չկար: Սեղանի վրայից մի կտոր հաց վերցրի և բարձրացա վառարանի վրա: Յերբ արթնացա, վառարանի վրայից տեսա, վոր իմ բերած սունկերը տապակել են և ուզում են ուտել: Յես ձայն տվի.

— Ինչու յեք առանց ինձ ուտում:

Նրանք պատասխանեցին.

— Իսկ դու ինչու յես քնել շուտ արի, դու ել կեր:





## ԿԱՏՎԻ ԶԱԳԸ

Կասյան ու կատյան  
քույր ու յեղբայր ելին:  
Նրանք մի կատու ունե-  
յին: Գարնանը կատուն կո-  
րավ: Յերեխաները նրան  
շատ փնտրեցին, բայց վոչ  
մի տեղ չգտան: Մի ան-  
գամ, յերբ նրանք խաղում  
եյին շտեմարանի մոտ,  
վերևից թույլ մլավոց  
լսեցին: Վասյան սան-  
դուխքով բարձրացավ շտեմարանի կտուրը,  
իսկ կատյան կանգնել եր ներքևում և ան-  
դադար հարցնում եր.

— Գտամը, գտամ:

Բայց Վասյան չեր պատասխանում:  
Վերջապես, նա ձայն տվեց.  
Գտա, մեր կատուն ե, ձագեր ել ունի,  
ինչ լավն են: Շուտով այստեղ արի:  
Կատյան վազեց տուն և կատվի համար  
կաթ բերեց:

Չագերը հինգ հատ ելին: Յերբ նրանք մի  
քիչ մեծացան և սկսեցին իրենց անկյունից  
դուրս գալ, յերեխաները ձագերից մեկին,  
վորը գորշ գույն ուներ և սպիտակ թաթիկներ,  
վերցրին և տուն բերին: Մայրը մյուս ձա-  
գերը բաժանեց հարևաններին, իսկ այդ մեկը  
թողեց յերեխաներին: Յերեխանները կերակ-  
րում եյին նրան, խաղում եյին հետը և իրենց  
հետ քննցնում:

Մի անգամ յերեխանները գնացին ճանա-  
պարհին խաղալու և կատվի ձագին ել իրենց  
հետ տարան:



Քամին շարժում եր ճանապարհին թափված ծղնոտները, իսկ կատվի ձագը խաղում եր նրանց հետ, և յերեխաներն ուրախանում եյին նրանով։ Հետո նրանք ճանապարհի մոտ ավելուկ գտան, սկսեցին քաղել և ձագին մոռացան։

Հանկարծ նրանք լսեցին, վոր մեկը բարձր գոչում ե «Յետ դարձիր, յետ դարձիր», և տեսան, վոր սլանում ե մի վորսորդ, իսկ նրա



յերկու շները, կատվի ձագին տեսնելով, ուզում եյին բռնել։ Հիմար ձագը փոխանակ փախչելու, կպել եր գետնին, մեջքն ուռցրել ու նայում եր շանը։

Կատյան շներից վախեցավ, բղավեց ու փախավ։ Վասյան, վորքան ուժ ուներ վազեց դեպի ձագը և շների հետ միասին հասավ նրան։

Շներն ուզում եյին բռնել ձագին. բայց  
Վասյան յերեսնիվար ընկավ ձագի վրա և  
պաշտպանեց շներից:

Վորսորդը ձիով վրա հասավ և շներին հե-  
ռացրեց: Վասյան կատվի ձագին տուն բերեց  
և դրանից հետո այլևս իր հետ դաշտ չեր  
տանում:



890

ԳԻՒԸ 40 ԿՊՊ.

Л. ТОЛСТОЙ  
РАССКАЗЫ  
ГИЗ АРМ ССР, ЕРЕВАН



NL0392511

ՀՀ Ազգային գրադարան

5425